ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 24 մարտի 2025թ.

2025 թվականի մարտի 24-ին, ժամը 12:00-ին, ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենքում տեղի ունեցավ մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ:

Նիստին մասնակցում էին.

1. **Դանիել Դանիելյան** – Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ հանձնաժողովի նախագահ
2. **Լիդիա Պողոսյան**- Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ,
3. **Մերի Կարապետյան** – Բյուրեղավան համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար,
4. **Աննա Մկրտչյան** – Բյուրեղավան համայնքի ղեկավարի օգնական՝ հանձնաժողովի անդամ,
5. **Տիգրան Հովսեփյան**- Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ հանձնաժողովի անդամ,
6. **Սարգիս Ղազարյան** - Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ հանձնաժողովի անդամ,
7. **Վարուժան Մարտիրոսյան**- Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ՝ հանձնաժողովի անդամ,
8. **Կարինե Չոբանյան** - Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ի գործավար, կադրերի տեսուչ՝ հանձնաժողովի անդամ,
9. **Հայկանուշ Գրիգորյան** – Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի փոխարինող դաստիարակ՝ հանձնաժողովի անդամ,
10. **Անի Իգիթյան** – Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ՝ հանձնաժողովի քարտուղար:

Օրակարգի հարցերը կազմվել են՝ հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողով ստեղծելու, նրա գործառույթները սահմանելու, առաջարկների ներկայացնման հայտի և նախնական գնահատման աղյուսակի ձևաթղթերը սահմանելու մասին Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 4-ի N 580-Ա որոշումը:

Օրակարգը.

Բյուրեղավան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում չափորոշիչներին համապատասխանող առաջարկ-նախագծերի քվեարկության արդյունքների ամփոփում:

Լսեցին.

1. *Հանձնաժողովի նախագահ Դանիել Դանիելյանին*

   Նա արձանագրեց, որ Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցի համաձայն՝ առաջարկ-նախագծերի քվերակությունը ավարտվել է:

2. *Հանձնաժողովի քարտուղար Անի Իգիթյանին*

   Նա ներկայացրեց քվեարկությամբ դրված ծրագրերի հավաքած միավորները՝ առավելագույն թվից նվազման կարգով.

   - *Խաղահրապարակի կառուցում - 437 ձայն,*
   - *Նուռնուս գյուղի ոռոգման համակարգի անցկացում – 272 ձայն,*
   - *Նուռնուս բնակավայրում խաղահրապարակի կառուցում – 204 ձայն,*
   - *Թվային նորարարություն համայնքի համար - 149 ձայն,*
   - *Սգո սրահի կառուցում - 101 ձայն,*
   - *Բյուրեղավան համայնքի շենքերի բակերում մարզական սարքերի տեղադրում- 22 ձայն,*
   - *Բյուրեղավան քաղաքում 3-ից 15 տարեկան երեխաների համար զարգացման կենտրոնի կառուցում – 7 ձայն:*

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգի 14-րդ կետի համաձայն քվեարկության շեմը հաղթահարած առաջարկ-նախագծի հիման վրա մշակել մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագիր և կազմել սուբվենցիոն հայտ, որը ըստ սահմանված ժամանակացույցի պետք է ներկայացնել լիազոր մարմին:

Կողմ-10 **Ձեռնպահ–0** **Դեմ- 0**

Հանձնաժողովի անդամներ՝

_____ Դանիել Դանիելյան

_____ Լիդիա Պողոսյան

_____ Մերի Կարապետյան

_____ Աննա Մկրչտյան

_____ Տիգրան Հովսեփյան

_____ Սարգիս Ղազարյան

_____ Վարուժան Մարտիրոսյան

_____ Կարինե Չոբանյան

_____ Հայկանուշ Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Անի Իգիթյան